ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Ալեքսանդր Սիրունյանի, Գևորգ Գյոզալյանի, Երվանդ Վարոսյանի, Կարապետ Աղաջանյանի, Կարեն Մեժլումյանի, Մարտուն Փանոսյանի, Մելանյա Առուստամյանի, Նելլի Հարությունյանի, Նիկոլայ Բաղդասարյանի և Սիմոն Բաբայանի,

քննության առնելով Պալատի ներկայացուցչություն ստեղծելու և ներկայացուցչության կանոնադրությունը հաստատելու մասին հարցը,

հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պալատի նախագահը Պալատի կանոնադրության 17.3 կետի 19-րդ ենթակետի համաձայն Պալատի խորհրդին է ներկայացրել կանոնադրության նախագիծը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 15-րդ մասի, ինչպես նաև Պալատի կանոնադրության 16.5 կետի 17-րդ ենթակետի, 21.1 և 21.2 կետերի պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի Հյուսիսային ներկայացուցչություն:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի Հյուսիսային ներկայացուցչության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավար Մանե Կարապետյանին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի Հյուսիսային ներկայացուցչության պետական հաշվառումը:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Արա Զոհրաբյան

24 սեպտեմբերի 2014թ.
թիվ 27/6-Լ
ք. Երևան